1. Սահմանել այն հիմնական քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն համապատասխան ազգային և այլ մարմինների կողմից 2016-2019 թթ. ընթացքում Բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող պոտենցիալ տարածքների՝ «Էմերալդ ցանցի» ձևավորումը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի 4 երկրներում (Բելառուս, Մոլդովայի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն և Ուկրաինա) և Հարավային Կովկասի 3 երկրներում (Հայաստան, Ադրբեջան և Վրաստան) մինչև 2020 թ. ավարտին հասցնելու նպատակով:
2. Ընդլայնել 2011-2020¹ թթ. համար արդեն իսկ համաձայնեցված Էմերալդ Օրացույցի փուլերը՝ ապահովելով «Էմերալդ ցանցի» մեկ ընդհանուր հիմունքով, որը կիսում են բոլոր եվրոպական երկրները, վայրի բնության միջազգայնորեն կարևոր բուսատեսակների և կենդանատեսակների ու դրանց ապրելավայրերի երկարաժամկետ պահպանությունը:

Ներածություն և ընդհանուր տեղեկատվություն

Համաձայն Բեռնի կոնվենցիայի 4.1 հոդվածի՝ յուրաքանչյուր Պայմանավորող կողմ պետք է ձեռնարկի համապատասխան միջոցներ ապահովելու՝ ա) վտանգված բնական միջավայրերի և բ) վայրի բնության կենդանական և բուսական աշխարհի բնակմիջավայրերի, հատկապես Կոնվենցիայի 1 և 2-րդ Հավելվածներում նշված տեսակների պահպանությունը: Համաձայն Հոդված 4.2-ի՝ Կողմերը պետք է կիրառեն իրենց պլանավորման և զարգացման քաղաքականությունները խուսափելու կամ նվազագույնի հասցնելու այն տարածքների վատթարացումը, որոնք նրանք պաշտպանում են Հոդված 4.1-ի նպատակներից ելնելով: Հոդված 4.3 և 10.1-ը պահանջում են համակարգված հատուկ ջանքերի գործադրում կենդանիների միգրացիոն ուղիներ հանդիսացող կարևոր տարածքների համար:

1989 թ. Բեռնի կոնվենցիայի Մշտական կոմիտեն ընդունեց որոշում և երեք բանաձևեր բնակմիջավայրերի պաշտպանության վերաբերյալ, ներառյալ հանձնարարական(այսուհետ Հանձնարարական) թիվ 16-ը՝ «Բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքների» ցանցի մշակման վերաբերյալ: Սույն ցանցի ստեղծման գործընթացն այն ժամանակ դադարեցվեց մի քանի տարով մինչ Եվրոպական համայնքը (հիմա Եվրոմիություն) գործի դրեց «Նատուրա 2000» ցանցը, որպեսզի երաշխավորվի կապ այս երկու ցանցերի միջև:

Ժամանակի ընթացքում Բեռնի Մշտական կոմիտեն հավանություն տվեց 1996թ. թիվ 3 բանաձևին (այսուհետ Բանաձև), ինչը արդյունավետորեն սկիզբ դրեց «Բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքների» ցանցի՝ «Էմերալդ ցանցի» մեկնարկին: 1998 թ. թիվ 5 բանաձևը(այսուհետ Բանաձև) հաստատեց, որ ԵՄ անդամ երկրները (որոնք բոլորը Բեռնի կոնվենցիայի Պայմանավորող կողմեր են հանդիսանում) իրենց Նատուրա 2000 տարածքները կներդնեն «Էմերալդ ցանցում»: Այս եղանակով, շնորհիվ երկու գործընթացների ներդաշնակեցման, «Էմերալդ ցանցն» աղյուսավետ ներառում է ընդլայնված Նատուրա 2000 ցանցը ոչ ԵՄ անդամ երկրների համար: Այսպիսով ստեղծվել է շաղկապված համաեվրոպական համակարգ:

Ավելին՝ համաձայն 1996թ. թիվ 3 և 1998թ. թիվ 5 բանաձևերի, «Էմերալդ ցանցին» մասնակցության հրավերներ են ստացվել այն Եվրոպական երկրներից, որոնք դեռևս Կոնվենցիայի Կողմ չեն հանդիսանում և նույնիսկ Կոնվենցիայի Կողմ հանդիսացող ոչ եվրոպական երկրներից: 2000 թվականից, որպես ոչ անդամ դիտորդ, Ռուսաստանի Դաշնությունը ակտիվորեն մասնակցում է գործընթացին և իր ներդրումը արտացոլված է ներկայիս Ճանապարհային քարտեզում:

Համապատասխան երկրները, «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի և այլ միջազգային համաժողովների միջոցով, հանձն են առել 2011-2020 թթ. Կենսաբազմազանության ռազմավարական պլանի 11-րդ նպատակի կատարումը, որը նախատեսում է մինչև 2020 թ. վերգետնյա և ստորգետնյա ջրերի առնվազն 17 %-ը և ցամաքային ու ծովային տարածքների 10 %-ը, հատկապես առանձնահատուկ նշանակության կենսաբազմազանությամբ և էկոհամակարգային ծառայություններ ունեցող տարածքների պահպա-

¹ Բեռնի Կոնվենցիա (2015a). Բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքների՝ Էմերալդ ցանցի իրականացման վերանայված օրացույց 2011-2020. Փաստաթուղթ T-PVS/PA (2015) 16 Մշտական հանձնաժողովի 35-րդ հանդիպման ժամանակ հաստատված, Ստրասբուրգ, 2015, դեկտեմբեր:

նություն արդյունավետորեն և հավասարաչափ կերպով կառավարվող, էկոլոգիապես ներկայացուցչական ու լավ փոխկապակցված պահպանվող տարածքների համակարգի միջոցով, ինչպես նաև այլ արդյունավետ տարածքահեն պահպանության միջոցառումների միջոցով՝ ինտեգրվելով ավելի լայն լանդշաֆտների և ծովային լանդշաֆտների:

Որպեսզի վերը նշված 7 երկներում արագացվի «Էմերալդ ցանցի» մշակումը, «Բնապահպանական տարածքների Էմերալդ Ցանց, փուլ-2» անվանումով ծրագիրը նախաձեռնվեց Եվրոպայի Խորհրդի և Եվրոմիության հետ համատեղ 2012-2016 թթ. համար: Ներկայիս Ճանապարհային քարտեզը թողարկվեց որպես այս համատեղ ծրագրի Ավարտական կոնֆերանսի արդյունք, որը տեղի է ունեցել Սինսկ քաղաքում, Բելառուս, 2016 թ. հոկտեմբերի 4-5-ը:

Տարածքների բացահայտման և նշանակման գործողություններ

Կոնվենցիայի Մշտական կոմիտեն ԵՄ ոչ անդամ երկրներին տրամադրել է ուղեցույցներ «Բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքների» բացահայտման և որոշման համար: Գործընթացը բաղկացած է 3 փուլերից (որոնք միմյանց հետևում են ինտերատիվ ձևով, այլ ոչ թե պարտադիր գծային հաջորդականությամբ):

Փուլ I

1. Այս փուլում 1ին քայլը մասնակից երկրների կողմից հատուկ պահպանության միջոցառումների սահմանումն է տեսակների և բնակմիջավայրերի համար: Այս ցուցակը լրացվել է Մշտական կոմիտեի կողմից (1996թ. 4-րդ և 1998² թ. 6-րդ բանաձևերով):
2. Երկրների համար պոտենցիալ Բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքների ընտրություն, որոնք կորակավորվեն, էթե՝
 - զգալիորեն նպաստում են վտանգված, էնդեմիկ տեսակների և Կոնվենցիայի Հավելված 1 և 2-ում թվարկված ցանկացած տեսակների գոյատևմանը.
 - նպաստում են զգալի թվով տեսակների կայունությանը բարձր տեսակային բազմազանության տարածքներում կամ ապահովում են մեկ կամ մի քանի տեսակների կարևոր պոպուլյացիաների գոյությունը.
 - պարունակում են վտանգված բնակմիջավայրի տեսակների կարևոր և/կամ ներկայացուցչական նմուշ.
 - պարունակում են որոշակի բնակմիջավայրում տեսակի բացառիկ նմուշ կամ տարբեր բնակմիջավայրերում տեսակների խճանկար.
 - ներկայացնում են կարևոր տարածք մեկ կամ մի քանի միգրացիոն տեսակների համար.
 - էապես նպաստում են Կոնվենցիայի նպատակների կատարմանը:
3. Երկրները հաջորդիվ պետք է լրացնեն ստանդարտ տվյալների ձևաթղթեր յուրաքանչյուր ընտրված տարածքի համար՝ կիրառելով Մշտական կոմիտեի 1998թ. Հանձնարարական 5-ին(այսուհետ Հանձնարարական) կցված ձևանմուշը և դրանք էլեկտրոնային եղանակով ուղարկում են Բեռնի Կոնվենցիայի Քարտուղարություն, որը, որակի և ամբողջականության տվյալների³ նախնական ստուգումից հետո, տարածքը պաշտոնապես ներկայացնում է Մշտական կոմիտեին որպես «Էմերալդ տարածքի թեկնածու»:

Փուլ II

Այն ներառում է առաջարկվող տարածքների կենսաաշխարհագրական հիմունքներով գնահատում՝ տարածաշրջանային սեմինարների միջոցով, որոնք գնահատում են համապատասխան երկրների տարածքների ցուցակի բավարար լինելը/համապատասխանությունը՝ տեսակ առ տեսակ և բնակմիջավայր առ բնակմիջավայր: Համապատասխան/բավարար ցուցակ է համարվում այն ցուցակը, որն ապահովում է բարենպաստ պահպանության կարգավիճակ տվյալ տեսակի կամ բնակմիջավայրի համար տվյալ կենսաաշխարհագրական տարածաշրջանում, որը՝

² Ապրելավայրերի ցուցակը կիրառվում է համընդհանուր, իսկ տեսակների ցուցակը մատնանշում է որոշակի տեսակներ, որոնք չեն պահանջում հատուկ պահպանության միջոցառումներ յուրաքանչյուր երկրում՝ շնորհիվ իրենց հարաբերական մեծ քանակության Եվրոպայի որոշ հատվածներում:

³ Ինչպես նկարագրված է Հանձնարարական թիվ 157-ի Հավելվածում (2011).

- ներկայացնում է յուրաքանչյուր էմերալդ տեսակների և բնակմիջավայրերի տարածքների ընդհանուր բաշխվածության շղթան ազգային մակարդակով (և կենսաաշխարհագրական մակարդակով, եթե երկիրը սփռված է ավելի քան մեկ տարածաշրջանում)։
- արտացոլում է բնակմիջավայրի բնապահպանական տատանումները և տեսակների գենետիկ տատանումները տվյալ կենսաաշխարհագրական տարածաշրջանում, ու (տեսակների համար) պարունակում է բնակմիջավայրերի ամբողջական շղթան դրա կյանքի ցիկլի տարբեր փուլերում։
- լավ հարմարեցված է հատուկ պահպանության կարիքներին, մասնավորապես՝ նրանք, ովքեր կապված են բաշխման պատկերների հետ և տվյալ տեսակների ու բնակմիջավայրերի վրա ազդող սպառնալիքների և ճնշումների հետ։
- ներառում է տվյալ տեսակի բնակմիջավայրերի և պոպուլյացիաների ընդհանուր ազգային տարածքի կարևոր համամասնություններ։

Սեմինարները կարող են եզրահանգել, որ սայտերի ցուցակը բավարար է կամ կարող են սահմանել այն բացերը, որոնք անհրաժեշտ են լրացնելու և/կամ հստակեցնելու այլ պահանջվող աշխատանքները։ Երբ երկրի ցուցակն այս գործընթացից առաջ է անցնում, այն մասնագետների խմբի կողմից ենթակա է վերջնական մանրամասն ուսումնասիրության և հաստատման նախքան Մշտական կոմիտեին պաշտոնական հաստատման ներկայացնելը որպես «Էմերալդի ցանցի» մաս։

Կենսաաշխարհագրական գնահատման գործընթացը կրկնվող գործընթաց է և մի քանի իրար հաջորդող գնահատումների իրականացման անհրաժեշտություն կարող է առաջանալ, եթե նախնական առաջարկները բավարար չեն բոլոր հատկանիշների պահպանության համար։

Փուլ III

Այն ներառում է «Էմերալդ ցանցի» հաստատված տարածքների ազգային ճանաչում, կառավարման իրականացում, մոնիթորինգ և հաշվետվողականության միջոցառումներ՝ համաձայն 2012 թ. թիվ 8 Հանձնարարականի։

ԵՄ/ԵՆ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԻ 2016 Թ. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԸՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործընթացի կազմակերպումը

- Ժամանակացույցեր պետք է մշակվեն գործողությունների քայլերի և փուլերի համար՝ ապահովելու յուրաքանչյուր ազգային ցանցի ստեղծումը մինչև 2020 թվականը։
- Բոլոր մասնակից երկրների կողմից Բեռնի կոնվենցիային լիիրավ մասնակցությունը պետք է ապահովվի, ինչը նշանակում է, որ մնացյալ ոչ-անդամ պետությունների կողմից դեպի պաշտոնական ընդունում տանող բոլոր քայլերը կատարվել են։
- Ազգային մարմինները պետք է սահմանեն և պատրաստ են լիովին ներգրավվել բոլոր շահագրգիռ խմբերին, ովքեր կկարողանան անկողմնակալ ներդրում ունենալ տարածքների սահմանման գործընթացին, այդ թվում՝ ենթաազգային մարմիններին, հասարարակական կազմակերպություններին, ինչպես նաև համապատասխան հմտություններով օժտված գիտնականներին։ Կքննարկվի բազմաշահագրգիռ կողմերի ներգրավմամբ ենթատարածաշրջանային սեմինարների կազմակերպումը՝ ավելի խոշոր երկրներում տարածքների նույնականացման և որոշման աշխատանքներում առաջընթաց արձանագրելու նպատակով։
- Համապատասխան լեզուներով լայնորեն տարածել բացատրական և ուղղորդական նյութեր «Էմերալդ ցանցի» տարածքների որոշման և նույնականացման գործընթացի վերաբերյալ՝ ապահովելու համար ներդրում ունենալ ցանկացողների լիարժեք ներգրավումը։ Գործընթացների վերաբերյալ նոր ամփոփված ուղեցույցերը (օրինակ՝ համապատասխանության/բավարարության գնահատականներ) կարող են անհրաժեշտ լինել աջակցելու այն շահագրգիռ կողմերին, ովքեր այնքան էլ ծանոթ չեն գործընթացին։

Տվյալների հավաքագրում և տարածքների նույնականացում

- Պետք է բնապահպանության ոլորտից դուրս նախաձեռնվեն տվյալների լրացուցիչ աղբյուրների պոտենցիալ ներդրման վերբերյալ հետազոտություններ, օրինակ՝ անտառային պաշարների գույքագրման, գյուղատնտեսական հողօգտագործման դասակարգումների և ջրային ռեսուրսների կառավարման տվյալների վերաբերյալ:
- Օգուտ պետք է քաղել հեղինակավոր «գորշ գրականությունից» և այլ հեղինակավոր տվյալների ու տեղեկատվության աղբյուրներից՝ ի լրումն գրախոսվող գիտական հրատարակումների, հատկապես այն դեպքերում, երբ մինչև օրս հրատարակված հետազոտությունները սահմանափակ են, իսկ պահպանության կարիքը հրատապ է:
- Անդրսահմանային իրավիճակներում պետք է ընդգրկել շահագրգիռ բոլոր կողմերի տվյալները, խորհրդատվությունները և գնահատականը, այդ թվում՝ ԵՄ երկրների և ոչ-անդամ երկրների օժանդակությունը, եթե դրա անհրաժեշտությունը կա: Ուշադրություն պետք է դարձվի համատեղ օգտագործվող էկոլոգիական համակարգերին, միգրացիոն ուղիներին և միջանցքներին՝ էկոլոգիապես գործառույթային հիմունքներով, ինչպես նաև պետք է նկատի ունենալ Եվրասիական հեռանկարը՝ կենսաաշխարհագրորեն կիրառելի լինելու տեսանկյունից:
- «Ամայի տարածություն/անապատ» համարվող տարածքները պետք է ներառվեն հնարավոր տարածքների ցանկում, քանի որ օգտագործման/տարածվածության պակասը հավասարագոր չէ սպառնալիքի բացակայությանը:
- Հանգամանալի բանակցային աշխատանքներ պետք է պլանավորվեն այն դեպքերում, երբ առանձնակի հետաքրքրություն ներկայացնող խմբերը (հողատերեր, որսորդներ) կարող են մտահոգություններ կամ տհաճություն դրսևորել բնության պահպանության նախատեսումների նկատմամբ:
- Ուշադրություն պետք է դարձվի համապատասխան ծովային և ցամաքային տարածքներին: Բեռնի կոնվենցիայի քարտուղարությունը և Մշտական կոմիտեն պետք է քննարկեն Մասնագետների խմբի ստեղծումը ծովային տարածքների պահպանության հետ կապված:

Հիմնավորված ցանցի կառուցումը

- Յուրաքանչյուր երկիր պետք է հստակեցնի կոնկրետ գործողությունների ծրագիր (ժամանակացույցերով), որով պահանջվում է անդրադառնալ «հիմնավորվածության/բավարարության» եզրակացություններին՝ կապված իր սեփական բնակմիջավայրերի և տեսակների հետ, որոնք համապատասխանում են մինչ այժմ նախաձեռնված կենսաաշխարհագրական սեմինարների արդյունքներին:
- Ազգային տարածքների ցուցակների հիմնավորվածությունը/բավարարությունը պետք է գնահատվի ոչ միայն Էմերալդի չափանիշների, այլ նաև Այիչիի կենսաբազմազանության ռազմավարական պլանի 11-րդ թիրախի տեսանկյունից:
- Երներում/կենսաաշխարհագրական տարածաշրջաններում, որտեղ լավ առաջընթաց է արձանագրվել տեսակների և բնակմիջավայրերի հիմնավորվածության/բավարարության ծածկույթի տեսանկյունից՝ համաձայն նախնական գնահատման սեմինարների, տարբերակներ պետք է փնտրվեն 2017 թ.-ին 2-րդ փուլի սեմինարների անցկացման նպատակով (մասնավորապես Կովկասի և Բորեալյան տարածաշրջանի ոչ թռչնային տեսակները, ներառյալ Հայաստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Վրաստանը և Ռուսաստանի Դաշնությունը): Որոշ դեպքերում երկկողմ հանդիպումները (ի հակադրություն բազմակողմ սեմինարների) կարող են համապատասխան լուծում դառնալ:
- Առաջարկություններ պետք է մշակվեն «Էմերալդ ցանցի» միջոցով պահպանվող տեսակների և բնակմիջավայրերի ցուցակները թարմացնելու համար (1994թ. թիվ 4 որոշում և 1998 թ. թիվ 6 որոշում) 7 երկրների էկոլոգիան լիարժեք ներկայացնելու համար: Ազգային պատասխանատու մարմինները պետք է առաջարկը լրացնեն տիպային օրինակներին համապատասխան և մատնանշեն առավել հրատապ համարվող թերությունների առաջնահերթությունները: Այստեղ, անհրաժեշտության դեպքում, պետք է հաշվի առնվի կենսաբազմազանությանն առնչվող այլ կոնվենցիաների համադրելի ցուցակների համատեղելիությունը:
- Ուշադրություն պետք է դարձվի Ցանցի հիմնավորվածությանը շարունակական հիմունքներով՝ նախնական գնահատման եզրակացություններից գատ, քանի որ բնակմիջավայրերի և տեսակների պոպուլյացիաների ցանկացած կորուստ կամ դեգրադացիա հետագայում կարող է պահանջել լրացումներ կատարել Ցանցում հիմնավորման/թարմացումը/բավարարությունը ապահովելու նպատակով:

Կարողություններ և ռեսուրսներ

Պետք է հաշվի առնվեն պոտենցիալ ֆինանսական աղբյուրների և այլ LIFE+, INTERREG և Արևելյան Գործընկերության գործիքների աջակցությունը: Բեռնի կոնվենցիայի Մշտական կոմիտեն սրա հետ կապված կաջակցի 7 երկրներին՝ տրամադրելով բարձր մակարդակի խրախուսանք կառավարություններին և այլոց, ովքեր ի վիճակի են նման աջակցություն տրամադրելու: Տարբերակներ պետք է ուսումնասիրվեն նաև կենտրոնացված ուղղորդում և խորհրդատվություն տրամադրելու՝ պոտենցիալ ֆինանսական աջակցության բացահայտման և գնահատման նպատակով:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Էմերալդ ցանցի» հաջողությանը հնարավոր չէ հասնել միայն նախատեսումների, այլ նաև համապատասխան տեսակների և բնակմիջավայրերի համար սահմանված պահպանության արդյունքների ապահովման միջոցով:

Համաձայն թիվ 16 հանձնարարականի՝ երկրների կողմից Բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածները սահմանելուց հետո, երկրներից պահանջվում է ապահովել, թե արդյոք՝

- տարածքները ենթարկվում են համապատասխան պահպանության ռեժիմի, որը հիմք է հանդիսանում «Էմերալդ ցանցի» մեջ ընդգրկելու (հղումը «համապատասխան ռեժիմին» նշանակում է, որ իրավական պահպանություն չի ակնկալվում),
- տարածքների կառավարման և/կամ պահպանության համար պատասխանատու գործակալություններն ունեն համապատասխան պատրաստվածություն, սարքավորումներ և ռեսուրսներ՝ իրենց դերակատարությունը ապահովելու համար,
- տեղին և համակարգված հետազոտություններ անցկացվում են աջակցելու Բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքների կառավարման կրիտիկական տարրերի ըմբռնմանը և դրանց կարգավիճակի մոնիթորինգին, և
- տարածքներին հարակից վայրերում կամ դրանց մոտակայքում տեղի ունեցող գործողությունները բացասաբար չեն անրադառնում դրանց վրա:

Երկրներին, Բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքների առնչությամբ խորհուրդ է տրվում՝

- կազմել և իրականացնել կարճաժամկետ և երկարաժամկետ կառավարման պլաններ,
- պարբերաբար վերանայել կառավարման պլանները՝ փոփոխվող գիտելիքների կամ այլ պայմանների տեսանկյունից,
- հստակորեն նշել Բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքները քարտեզի վրա և հնարավորության սահմաններում հողի վրա,
- հողատերերին և համապատասխան մարմիններին խորհրդատվություն տալ տարածքների տեղադրման և կարևոր հատկանիշների վերաբերյալ,
- ապահովել տարածքների մոնիթորինգը:

Այս հիմնական միջոցառումները բերված են թիվ 25 Հանձնարարականում (1991) և թիվ 8 Որոշման մեջ (2012), ինչպես նաև 2014 թ. հրատարակված ուղղորդիչ փաստաթղթում: Պահպանվող տարածքների և Էկոլոգիական ցանցի մասնագետների խումբը պատրաստել են Էմերալդ տարածքների կառավարման ուղեցույցների նախագիծ՝ կապված կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմացման հետ, ինչը կարելի է քննարկել Կոնվենցիայի վեբկայքում:

Պահպանություն

- Յուրաքանչյուր անհատական գործի համար պետք է հստակ տարբերակներ մշակվեն համապատասխան ռեժիմների համար, որոնք կիրառվելու են որոշված տարածքների պահպանության համար. լինեն սրանք լիիրավ իրավական պահպանություն կամ էլ այլ համապատասխանաբար արդյունավետ պահպանության միջոցներ:
- Տարածքների իրավական պահպանության միջոցառումների տարբեր մոտեցումների օրինակները պետք է տարածվեն երկրների շրջանում, որպեսզի ջանք չգործադրվի մոդելների վերաստեղծման վրա: ԵՄ երկրների բնության դիրեկտիվաների փոխատեղման փորձառությունը պետք է ներառվի ազգային օրենսդրության մեջ:

- Թեկնածու Էմերալդ տարածքների գտնվելու վայրը և կարևորությունը պետք է արտացոլվի համապատասխան քաղաքականության և պլանային գործիքներում, ոչ-պահպանական սեկտորներում, ինչպես նաև պահպանության պլաններում, օրինակ տարածաշրջանային զարգացման ռազմավարություններում:
- Երկրները, որոնք ներառել են «Էմերալդ ցանցի» դրույթների ասպեկտները իրենց ազգային օրենսդրության մեջ, պետք է փաստաթղթավորեն իրենց մոտեցումը և փորձը՝ որպես ուրիշներին աջակցելու տիպային օրինակներ, ովքեր մտածում են նմանապես վարվելու մասին:

Կառավարում

- Յուրաքանչյուր երկիր պետք է սահմանի իրատեսական և գերակա գործողություններ իր «Էմերալդ ցանցի» աստիճանական լիարժեք ծածկույթին հասնելու նպատակով համապատասխան կառավարման պլանների միջոցով՝ հաշվի առնելով գոյություն ունեցող լավագույն փորձի ուղեցույցները և փորձը, ինչպես նաև ներառի շրջակա լանդշաֆտների ազդեցությունը տարածքների վրա ու մոնթորինգին և հաշվետվություններին վերաբերող դրույթները:
- Գիտելիքների փոխանցման ուղիները և կարողությունների զարգացումը ԵՄ երկրներից պետք է այնպես ուսումնասիրվի, որ Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի 7 երկրները առավելագույնս օգուտ քաղեն ԵՄ-ում ձեռք բերած փորձից՝ ստեղծելով կառավարման միջոցներ և լավ փորձ տարածքների համար՝ Նատուրա 2000 ցանցում, մասնավորապես՝ կիսաբնական ապրելավայրերի տեսանկյունից:
- Փորձի փոխանակման և խնդրիների լուծման համատեղ ուղիներ պետք է ստեղծվեն ներգրավված բոլոր երկրների և դրանց անդրսահմանային հարևանների միջև այնպես, որ հաջողակ մեթոդները և քաղած դասերը փոխանակվեն:
- Քայլեր պետք է ձեռնարկվեն ապահովելու արտաքին ֆինանսավորման աղբյուրների աջակցությունը տարածքների կառավարման պլանների մշակման համար:
- «Էմերալդ ցանցի» ազգային համակարգողները պետք է համագործակցեն յուրաքանչյուր երկրում այլ Կոնվենցիաների ազգային համակարգողների հետ՝ ապահովելու փորձի փոխանակում և կառավարման պլանավորման ներդաշնակ մոտեցում՝ լիարժեքորեն օգտագործելով մեթոդաբանությունները և լավագույն փորձի չափանիշները, որոնք արդեն իսկ կարող են գոյություն ունենալ այլ շրջանակներում (օրինակ՝ Ճահճային տարածքների համար ընդունվել են Ռամսարի կոնվենցիայի կառավարման պլանավորման ուղեցույցները):
- Համատեղել տարբեր համակարգեր և մեխանիզմներ տարածքների արդյունավետ կառավարման նպատակով՝ ներառյալ կանոնակարգերի և պարտադիր չափանիշների, ինչպես նաև հիմնված խրախուսանքների և կամավոր միջոցառումների վրա: Համատեղել նաև տարբեր մակարդակների ամբիգիաները կապված նպատակների և արդյունքների հետ՝ ապահովելով Հանձնարարական թիվ 16-ի (1989), Հանձնարարական 25-ի (1991) և Ռոռշում թիվ 8-ի (2012) նվազագույն պահանջների բավարարումը:
- Նախապատրաստություններ տեսնել այն բոլոր շահագրգիռ խմբերի լիարժեք ներգրավման նպատակով, ովքեր ի վիճակի կլինեն ներդրում ունենալ տարածքների կառավարման պլանավորման և իրականացման աշխատանքներին՝ այդ թվում՝ հասրակական կազմակերպությունների սեկտորը, ինչպես նաև ռեսուրսների կառավարման գործակալությունները և իրազեկ գիտնականները: Ներգրավվածությունը, ի թիվս այլոց, կարող է ներառել տեղեկատվության և տվյալների փոխանակում, կառավարման միջոցառումների ուղղակի կատարում, մասնակցություն որոշումների կայացմանը, ինչպես նաև ներկայացուցչություն պատասխանատու համապատասխան մարմիններում կառավարման ռեժիմների ղեկավարման կամ վերահսկողության նկատմամբ:

Մոնիթորինգ և արդյունավետության գնահատում

- Յուրաքանչյուր երկիր պետք է մոնիթորինգի ենթարկի իր Էմերալդ Ցանցի բոլոր տարածքները՝ ապահովելու համար ցանկացած փոփոխության բացահայտում, որը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ տարածքի էկոլոգիական բնույթի վրա և սրա մասին զեկուցի Բեռնի քարտուղարությանը (համաձայն 1998թ. թիվ 5 որոշմանը), ինչպես նաև անհրաժեշտության դեպքում հանձն առնվեն սպառնալիքների և փոփոխությունների դեմ ուղղված համապատասխան պահպանության միջոցառումներ:
- Յուրաքանչյուր երկիր պետք է սահմանի իր «Էմերալդ ցանցի» տարածքների կառավարման էկոլոգիա-

կան արդյունավետության վերատուգման և գնահատման մեխանիզմները՝ անրադառնալով յուրաքանչյուր տարածքի համար սահմանված պահպանման և կառավարման նպատակներին:

- «Էմերալդ ցանցի» իրականացման մոնիթորինգի և արդյունավետության գնահատումը պետք է ինտեգրվի յուրաքանչյուր երկրի ազգային կենսաբազմազանության ռազմավարության և/կամ գործողությունների պլանի իրականացման մոնիթորինգին:

Հաղորդակցության գործողություններ

Լիարժեք արդյունավետ լինելու նպատակով՝ «Էմերալդ ցանցը» պետք է ապահովի հասարակական, քաղաքական և ինստիտուցիոնալ աջակցության բարձր մակարդակ: Սա իր հերթին կախված կլինի տեղեկատվության հասանելիությունից, միջոլորտային համագործակցությունից և քաղաքացիական հասարակության լավ ներգրավվածությունից: Այս թեմայի առնչությամբ սույն ճանապարհային քարտեզում սահմանված գործողությունները կարող են ժամանակի ընթացքում մշակվել Ցանցի «Հաղորդակցության պլանում»:

Բեռնի կոնվենցիայի մասնագետների կողմից պատրաստվել է Համաեվրոպական էկոլոգիական ցանցի ռազմավարական Գործողությունների պլան 2012-2020 թթ. համար: Այն պարունակում է իրազեկման բարձրացման առաջարկություններ էկոլոգիական ցանցերի, ներառյալ «Էմերալդ ցանցի» առավելությունների մասին կարճ հրատարակումներ, որոնք ուղղված են որոշում կայացնողներին և այլ շահագրգիռ կողմերին: Փորձի փոխանակումը այն մարդկանց հետ, ովքեր նախաձեռնել են Նատուրա 2000 ցանցի առաջխաղացումը ԵՄ երկրներում, նույնպես կարևոր է:

Ցանցի աջակցությանը, վստահելիությանը և արդյունավետ գործադրմանը հնարավոր կլինի հասնել տեղեկատվության հասանելիության և տվյալների արդյունավետ փոխանակման միջոցով: 1998 թ. թիվ 5 Հանձնարարականը պահանջում է, որ Բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածների մասին տվյալների բազան պետք է հանրային լինի և մասնագետների խումբը պետք է պարբերաբար հրապարակի նշանակված Բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածների ցուցակը: Մշտական հանձնաժողովը 2013 թ. ընդունած ուղեցույցի համաձայն՝ որոշում է կայացրել, որ կենսաաշխարհագրական սեմինարների վերջնական մանրամասն եզրակացությունները պետք է հրապարակվեն Եվրոպայի խորհրդի վեբայտում:

Մոնիթորինգը և գնահատումը նշանակություն ունեն միայն այն դեպքում, երբ սրանք առնչվում են հաշվետվողականության գործընթացների հետ և սա այստեղ հանդիսանում է որպես հաղորդակցության հետագա մոտեցում: 1998 թ. թիվ 5 Հանձնարարականը երկրներին խնդրում է Քարտուղարությանը տեղյակ պահել նշանակված Բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածների էկոլոգիական բնույթի վրա ցանկացած հիմնարար բացասական ազդեցության մասին: 2012 թ. թիվ 8 Որոշումը կառավարություններին խնդրում է հաշվետվություններ ներկայացնել կառավարման միջոցառումների իրականացման վերաբերյալ յուրաքանչյուր 6 տարին մեկ, որ իրենք պլանավորել են իրենց Էմերալդ տարածքների համար: Հաշվետվության ներկայացման 1-ին շրջանը 2018 թվականին է: (Մասնագետների խմբին հանձնարարվել է մշակել հաշվետվություն ներկայացնելու ձևաչափ):

Հաղորդակցության ռազմավարական մոտեցում

- Յուրաքանչյուր մասնակից երկիր արտաքին աջակցության հնարավորության և կարողության դեպքում՝ կառավարության և ՀԿ-ների հետ համատեղ պետք է մշակի «Էմերալդ ցանցի» հաղորդակցության գործողությունների ռազմավարություններ/ծրագրեր (հնարավորության դեպքում ներառելով հանրային տեղեկատվական քարոզարշավներ):
- 7 երկրների և նրանց հարևանների միջև, պաշտոնական և ոչ-պաշտոնական մակարդակներով, պետք է ստեղծվի երկկողմ և բազմակողմ հաղորդակցության ուղիներ «Էմերալդ ցանցի» ստեղծման և գործադրման վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով:
- Բեռնի կոնվենցիայի քարտուղարությունը պետք է տեղեկատվություն փոխանակի Բազմակողմ բնապահպանական համաձայնագրերի քարտուղարությունների հետ՝ համատեղ կամ ներդաշնակեցված մոտեցումներ փնտրելով հաղորդակցության, կրթական, մասնակցային և իրազեկման աշխատանքների վերաբերյալ՝ կապված տարածքների ցանցերի հետ Էմերալդ տարածքում: Բեռնի կոնվենցիայի Մշտական կոմիտեն կառավարություններին պետք է խրախուսի՝ ազգային մակարդակով ապահովելու տարբեր կոնվենցիաների համապատասխան պատասխանատու անձանց սերտ համագործակցությունը:
- Երկրները, ՀԿ-ները և կառավարությունները պետք է փոխանակեն հաջողված հաղորդակցական նախաձեռնությունները, որպեսզի դասեր քաղվեն, գոյություն ունեցող նյութերը հարմարեցվեն ավելի

լայն լսարանի համար և տարբեր մոտեցումներ հաշվի առնվեն տարբեր թիրախային խմբերի համար (դպրոցներ, տուրիստներ և այլն):

Տարածվածության և ազդեցության հզորացում

- Հռոկվածները և հաղորդակցության ու իրազեկության բարձրացման այլ նյութերը պետք է տարածվեն առկա միջոցներով ոչ միայն առաջնային իրականացնող կազմակերպությունների կողմից, այլև բոլոր համապատասխան գործընկերների ինտերնետային կայքերի, հրապարակումների, սոցիալական լրատվամիջոցների և այլ հանրային հեռուստաալիքների միջոցով:
- Բեռնի կոնվենցիայի քարտուղարությունը կընդլայնի ուղեցույցային և այլ նյութերի տրամադրումը օգտվողի համար դյուրին և հարվարավետ ձևաչափով Կոնվենցիայի վեբկայքի Էմերալդ ցանցի կայքէջերում:
- Ֆինանսական աջակցության պոտենցիալ աղբյուրները պետք է մասնավորապես ուսումնասիրվեն հաղորդակցության նյութերը համապատասխան տեղական լեզուներով լրացուցիչ թարգմանության և փորձառու հաղորդակցական մասնագետներ վարձելու նպատակով գիտական և տեխնիկական նյութերը հանրության համար գրավիչ դարձնելու համար:

ԵՎՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքների Էմերալդ ցանց, փուլ-II» համատեղ ծրագիրը համարվում է ուղենիշ Եվրախորհրդի և Եվրամիության համագործակցության համար: Այն արդեն իսկ հանգեցրել է տպավորիչ արդյունքների և համագործակցության ուշագրավ աստիճանի ոչ միայն Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի 7 երկրների միջև, այլև այդ երկրների կառավարությունների, հասարակական կազմակերպությունների և գիտական հաստատությունների միջև: Նրանց համընդհանուր նպատակը և ուժեղ համագործակցային ոգին ավարտական գիտաժողովի հիմնական առանձնահատկությունն էր, ինչի արդյունքում մշակվեց այս ճանապարհային քարտեզը:

Ճանապարհային քարտեզը այսպիսով հանդիսանում է որպես հզոր կոնսենսուսային համաձայնագիր հետագա քայլերի համար: Այն այնուամենայնիվ չպետք է դիտարկվի որպես հաշվետվություն, այլ որպես գործնական աշատանքային գործիք՝ ցուցատախտակներով և երթուղիներով, որոնք ուրվագծված են քարտեզի վրա հետագայում փոխակերպվելու անհատական գործողության քայլերի և ավելի լայն գործառնական մանրամասների: Շատ դեպքերում սա կներառի առկա ջանքերի շահարկում և ուժգնացում, այլ ոչ թե պարտադիր նոր գործողությունների ձեռնարկում՝ հաշվի առնելով այն փաստը, որ տեխնիկական հիմքերը լավ դրվել են համատեղ ծրագրի Փուլ I և II էական արդյունքների միջոցով:

Ճանապարհային քարտեզի բոլոր երեք «չափերը» հավասարապես կարևոր են և թափանցիկ: Միասին վերցրած դրանք ապահովում են մինչև 2020 թ. ամբողջական և լիարժեք գործող «Էմերալդ ցանց» ունենալու ուժեղ եռանկյունի՝ ապահովելով իր հետագա կայունությունը: Եվրոպայի վայրի բնության և բնակմիջավայրերի ապագան կախված է սրանից:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԷՄԵՐԱԼԴ ՑԱՆՑԻ» ՊՈՏԵՆՑԻԱԼ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿՄԻՋԱՎԱՅՐԵՐԸ

հհ	Կոդ	Բնակմիջավայրի անվանումը*
1	C1.1	Մշտական օլիգոտրոֆ բնական և արհեստական լճեր, լճակներ
2	C1.224	<i>Utricularia vulgaris</i> լողացող գաղութներ
3	C1.225	Համակեցություններ Սալվինիայի գերակայությամբ
4	C1.25	Մեզոֆիտ ջրամբարների ստորջրյա գորգեր
5	C1.32	Էվտրոֆային ջրամբարների ազատ լողացող բուսականություն
6	C1.33	Էվտրոֆային ջրամբարների արմատակալած ստորջրյա բուսականություն
7	C1.3411	Փոքր ջրամբարներում ջրային գորտնուկների համակեցություններ
8	C1.4	Մշտական դիստրոֆ բնական և արհեստական լճեր, լճակներ
9	C2.12	Կոշտ ջրի աղբյուրներ
10	C2.18	Թթվային օլիգոտրոֆ գետերի և աղբյուրների բուսականություն
11	C2.19	Կարբոնատներով հարուստ օլիգոտրոֆ գետերի և աղբյուրների բուսականություն
12	C2.1A	Գետերի և աղբյուրների մեզոտրոֆ բուսականություն
13	C2.1B	Գետերի և աղբյուրների էվտրոֆ բուսականություն
14	C2.25	Թթվային օլիգոտրոֆ արագ հոսքով ջրերի բուսականություն
15	C2.26	Կարբոնատներով հարուստ օլիգոտրոֆ արագ հոսքով ջրերի բուսականություն
16	C2.27	Արագ հոսքով ջրերի մեզոտրոֆ բուսականություն
17	C2.28	Արագ հոսքով ջրերի էվտրոֆ բուսականություն
18	C2.33	Դանդաղ հոսող գետերի մեզոտրոֆ բուսականություն
19	C2.34	Դանդաղ հոսող գետերի էվտրոֆ բուսականություն
20	C3.4	Ցամաքաջրային կամ քարացած ջրամբարների տեսակներով աղքատ ցածրած համակեցություններ
21	C3.51	Եվրո-սիբիրական ցածրած, միամյա ցամաքային ճմակալած համակեցություններ
22	C3.55	Հազվագյուտ բուսականությամբ գետային խճաքարային լեզվակներ
23	C3.62	Առանց բուսականության խճաքարային լեզվակներ
24	D2.3	Անցումային ճահիճներ և ճահճուտներ
25	D4.1	Հարուստ ճահիճներ, այդ թվում՝ էվտրոֆային բարձրախոտային ճահիճներ և կարբոնատային ջրի ժայթքումներ
26	D5.2	Առանց բաց ջրային մակերեսների խոշոր բոշխերի մացառուտներ
27	D6.1	Ցամաքային աղակալված ճահիճներ
28	E1.11	Եվրո-սիբիրական խոտային համակեցություններ քարային փլվածքների վրա
29	E1.2	Բազմամյա կալցիումասեր խոտաբույսային համակեցություններ և տափաստաններ
30	E1.3	Միջերկրածովային չորասեր խոտաբույսային համակեցություններ
31	E1.83	Միջերկրածովային լեռնային <i>Nardus stricta</i> –ի համակեցություններ
32	E2.3	Լեռնային խոտհարքային մարգագետիններ
33	E3.3	Ենթամիջերկրածովյան խոնավ մարգագետիններ
34	E3.4	Թաց և խոնավ էվտրոֆ և մեզոտրոֆ խոտային համակեցություններ
35	E3.5	Խոնավ օլիգոտրոֆ խոտային համակեցություններ

36	E4.3	Ալյան և մերձալյան խոտային համակեցություններ թթու հողերի վրա
37	E4.4	Ալյան և մերձալյան խոտային համակեցություններ կրաքարային սուբստրատների վրա
38	E5.4	Խոնավ բարձրախոտային կամ պտերային անտառի եզրեր կամ մարգագետիններ
39	E5.5	Մերձալյան բարձրախոտերի և պտերների խոնավ մացառուտներ
40	E6.2	Ցամաքային աղակալված տափաստաններ
41	F2.22	Մրտավարդի թփուտներ
42	F3.245	Արևելամիջերկրածովյան լայնատերև թփերի մացառուտներ
43	F3.247	Պոնտո-սարմատական լայնատերև թփերի մացառուտներ
44	F5.13	Գիհու տոմիլյարներ
45	F6.8	Քսերո-հալոֆիտային թփերի մացառուտներ
46	F7	Բարձիկանման փշոտ թփերի մացառուտներ (այդ թում՝ տրագականտային բուսականությունը)
47	F9.1	Ափամերձ թփուտներ
48	F9.3	Հարավային ափամերձ մացառուտներ
49	G1.11	Ափամերձ ուռենու անտառներ
50	G1.22	Կաղնե-հացե-թեղային խառը անտառներ խոշոր գետերի հունների մոտ
51	G1.3	Միջերկրածովյան գետամերձ անտառներ
52	G1.6	Հաճարկուտներ
53	G1.A1	Կաղնե-հացե-բոխային անտառներ Էվտրոֆային և մեզոտրոֆային հողերում
54	G1.A4	Կիրճերի և լանջերի անտառներ
55	G1.A7	Սև և Կասպյան ծովերի տերևաթափ խառը անտառներ
56	G3.4E	Պոնտո-կովկասյան սոճուտներ
57	G3.9	Cupressaceae կամ Taxaceae ընտանիքների ներկայացուցիչների գերակշռությամբ մերկասերմերի անտառներ
58	H1	Քարանձավներ
59	H2.3	Թթվային սիլիցիումային բարեխառն-լեռնային գոտու քարացրոններ
60	H2.4	Կրաքարային կամ ուլտրահիմնական բարեխառն-լեռնային գոտու քարացրոններ
61	H2.5	Թթվային սիլիցիումային տաք լանջերի քարացրոններ
62	H2.6	Կրաքարային կամ ուլտրահիմնական տաք լանջերի քարացրոններ
63	H3.1	Թթվային սիլիցիումային ժայռեր
64	H3.2	Հիմնական կամ ուլտրահիմնական ժայռեր
65	H3.511	Կրաքարային քարքարոտ մակերեսներ

*Բնակմիջավայրերի նկարագրությունը կարելի է գտնել EUNIS համակարգի կայքում կամ Ֆայլուշ Գ.Մ., Ալեքսանյան Ա.Ս. «Հայաստանի բնակմիջավայրերը» աշխատության մեջ (2016):

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԷՄԵՐԱԼԴ ՑԱՆՑԻ» ՊՈՏԵՆՑԻԱԼ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՈՒՑՍԵՐԻ ԵՎ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Անոթավոր բույսեր				
հհ	Կոդ	Տեսակ		ՀՀ Կարմիր գիրք
1	1689	<i>Dracocephalum austriacum</i>	Վիշապազլուխ ավատրիական	EN
2	1758	<i>Ligularia sibirica</i>	Լեզվուկ սիբիրյան	-
3	2068	<i>Microcnemum coralloides</i> ssp. <i>anatolicum</i>	Միկրոկնեմում մարգանանման	EN
4	2098	<i>Paeonia tenuifolia</i>	Քաջվարդ նեղատերև	CR
5	2326	<i>Dactylorhiza chuhensis</i>	Դակտիլորիզ չուխինյան	-
6	2333	<i>Steveniella satyrioides</i>	Ստենեիելա սատիրանման	EN
7	4067	<i>Echium russicum</i>	Իծախոտ ռուսաստանյան	-
8	1528	<i>Saxifraga hirculus</i>	Քարբեկ ճահճային	-
Անողնաշար կենդանիներ				
հհ	Կոդ	Տեսակ		ՀՀ Կարմիր գիրք
1	1014	<i>Vertigo angustior</i>	Նեղ խխունջ	CR
2	1016	<i>Vertigo moulinsiana</i> *	Մոլինի խխունջ*	-
3	1042	<i>Leucorrhina pectoralis</i>	Ճահճային ճպուռ	EN
4	1061	<i>Maculinea nausithous</i>	Մթնշաղային կապտաթիթեռ	VU
5	1078 (6199)	<i>Callimorpha (Euplagia) quadripunctaria</i>	Քարաբիծ արջաթիթեռ	-
6	1087	<i>Rosalia alpina</i>	Ալպիական ռոզալիա	EN
7	1088	<i>Cerambyx cerdo</i>	Կաղնու մեծ երկարաբեղիկ	VU
8	4043	<i>Pseudophilotes bavius</i>	Բավիուս կապտաթիթեռ	-
Ողնաշարավոր կենդանիներ				
Ձկներ				
հհ	Կոդ	Տեսակ		ՀՀ Կարմիր գիրք
1	1130	<i>Aspius aspius</i>	Կարմրաշուրթ հաշամ	VU
2	1143	<i>Barbus capito</i>	Ճանար	-
3	1146	<i>Sabanejewia aurata</i>	Ոսկեգույն ծական	DD
4	5339	<i>Rhodeus sericeus amarus</i>	Դառնուկ	-
Սողուններ				
հհ	Կոդ	Տեսակ		ՀՀ Կարմիր գիրք
1	1219	<i>Testudo graeca</i>	Միջերկրածովային կրիա	VU
2	1220	<i>Emys orbicularis</i>	Ճահճային կրիա	-
3	1222	<i>Mauremys caspica</i>	Կասպիական կրիա	-
Թռչուններ				
հհ	Կոդ	Տեսակ		ՀՀ Կարմիր գիրք
1	A019	<i>Pelecanus onocrotalus</i>	Վարդագույն հավալուսն	VU

2	A020	<i>Pelecanus crispus</i>	Գանգրափետուր հավալուսն	EN
3	A021	<i>Botaurus stellaris</i>	Մեծ ջրցուլ	-
4	A022	<i>Ixobrychus minutus</i>	Փոքր ջրցուլ	-
5	A023	<i>Nycticorax nycticorax</i>	Կվակվա	-
6	A024	<i>Ardeola ralloides</i>	Դեղին տառեղ	-
7	A026	<i>Egretta garzetta</i>	Սպիտակ փոքր տառեղ	-
8	A027	<i>Egretta alba</i>	Սպիտակ մեծ տառեղ	-
9	A029	<i>Ardea purpurea</i>	Շիկակարմիր տառեղ	-
10	A030	<i>Ciconia nigra</i>	Սև արագիլ	VU
11	A031	<i>Ciconia ciconia</i>	Սպիտակ արագիլ	-
12	A032	<i>Plegadis falcinellus</i>	Քաջահավ	VU
13	A034	<i>Platalea leucorodia</i>	Տարգալակտուց	EN
14	A035	<i>Phoenicopterus ruber</i>	Սովորական ֆլամինգո	DD
15	A037	<i>Cygnus bewickii</i>	Փոքր կարապ	VU
16	A038	<i>Cygnus cygnus</i>	Ճշան կարապ	VU
17	A042	<i>Anser erythropus</i>	Ծվվան սագ	VU
18	A057	<i>Marmaronetta angustirostris</i>	Մարմարյա մրտիմն	EN
19	A060	<i>Aythya nyroca</i>	Սպիտակաաչք սուզաբաղ	VU
20	A068	<i>Mergus albellus</i>	Լուսոկ	-
21	A071	<i>Oxyura leucocephala</i>	Սպիտակագլուխ բաղ	EN
22	A072	<i>Pernis apivorus</i>	Կրետակեր	-
23	A075	<i>Haliaeetus albicilla</i>	Սպիտակապոչ արծիվ	EN
24	A076	<i>Gypaetus barbatus</i>	Գառնանգղ	VU
25	A077	<i>Neophron percnopterus</i>	Գիշանգղ	EN
26	A078	<i>Gyps fulvus</i>	Սպիտակագլուխ անգղ	VU
27	A079	<i>Aegypius monachus</i>	Սև անգղ	EN
28	A080	<i>Circus gallicus</i>	Օձակեր արծիվ	VU
29	A081	<i>Circus aeruginosus</i>	Ճահճային մկնաճուռակ	-
30	A082	<i>Circus cyaneus</i>	Դաշտային մկնաճուռակ	-
31	A083	<i>Circus macrourus</i>	Տափաստանային մկնաճուռակ	EN
32	A084	<i>Circus pygargus</i>	Մարգագետնային մկնաճուռակ	VU
33	A089	<i>Aquila pomarina</i>	Փոքր ենթաարծիվ	VU
34	A090	<i>Aquila clanga</i>	Մեծ ենթաարծիվ	VU
35	A091	<i>Aquila chrysaetos</i>	Քարարծիվ	VU
36	A092	<i>Hieraetus pennatus</i>	Գաճաճ արծիվ	VU
37	A094	<i>Pandion haliaetus</i>	Զրարծիվ	VU
38	A095	<i>Falco naumanni</i>	Տափաստանային հողմավար բազե	VU
39	A097	<i>Falco vespertinus</i>	Կարմրաոտ բազե	VU
40	A098	<i>Falco columbarius</i>	Աղավնաբազե	DD
41	A101	<i>Falco biarmicus</i>	Միջերկրածովյան բազե	DD
42	A103	<i>Falco peregrinus</i>	Սապսան	VU
43	A119	<i>Porzana porzana</i>	Մեծ ճահճահովվիկ	-
44	A120	<i>Porzana parva</i>	Եվրոպական ճահճահովվիկ	-
45	A121	<i>Porzana pusilla</i>	Գաճաճ ճահճահովվիկ	-
46	A122	<i>Crex crex</i>	Մարգահավ	VU

47	A124	Porphyrio porphyrio	Մուլթանական հավ	DD
48	A127	Grus grus	Մոխրագույն կռունկ	EN
49	A128	Tetrax tetrax	Փոքր արոս	VU
50	A129	Otis tarda	Մեծ արոս	VU
51	A131	Himantopus himantopus	Ոտնացուպիկ	VU
52	A132	Recurvirostra avosetta	Բզակտուց	VU
53	A133	Burhinus oedicnemus	Ավդոտկա	-
54	A135	Glareola pratincola	Տափաստանային ծիծառակտցար	VU
55	A138	Charadrius alexandrinus	Ծովային քարադր	VU
56	A139	Charadrius morinellus	Պինդիրա	-
57	A140	Pluvialis apricaria	Ոսկեփայլ քարադր	-
58	A151	Philomachus pugnax	Կովակտցար	-
59	A154	Gallinago media	Կրկնակտցար	VU
60	A157	Limosa lapponica	Փոքր իլիկակտցար	-
61	A166	Tringa glareola	Ֆիֆի	-
62	A167	Xenus cinereus	Թերեքի կտցար	-
63	A170	Phalaropus lobatus	Կլորաքիթ լողակտցար	-
64	A176	Larus melanocephalus	Սևազլուխ որոր	-
65	A177	Larus minutus	Փոքր որոր	-
66	A180	Larus genei	Ծովային աղավանդոր	-
67	A189	Gelochelidon nilotica	Որորակտուց ջրածիծառ	VU
68	A190	Sterna caspia	Կասպիական ծովածիծառ	-
69	A193	Sterna hirundo	Գետային ջրածիծառ	-
70	A195	Sterna albifrons	Փոքր ջրածիծառ	VU
71	A196	Chlidonias hybridus	Սպիտակաայտ ջրածիծառ	VU
72	A197	Chlidonias niger	Սև ջրածիծառ	-
73	A198	Chlidonias leucopterus	Սպիտակաթև ջրածիծառ	-
74	A215	Bubo bubo	Բվեճ	VU
75	A222	Asio flammeus	Ճահճային բու	-
76	A223	Aegolius funereus	Թավշատո բու	VU
77	A224	Caprimulgus europaeus	Այծկիթ	-
78	A229	Alcedo atthis	Երկնագույն ալկիոն	-
79	A231	Coracias garrulus	Ներկարար	VU
80	A236	Dryocopus martius	Սև փայտփոր	VU
81	A238	Dendrocopos medius	Միջին փայտփոր	-
82	A242	Melonocorypha calandra	Տափաստանային արտույտ	-
83	A243	Calandrella brachydactyla	Փոքր արտույտ	-
84	A246	Lullula arborea	Անտառային արտույտ	-
85	A255	Anthus campestris	Դաշտային ձիաթռչնակ	-
86	A272	Luscinia svesica	Կապտափող սոխակ	-
87	A293	Acrocephalus melanopogon	Նրբակտուց եղեգնաթռչնակ	-
88	A307	Sylvia nisoria	Ճուռականման շահրիկ	-
89	A320	Ficedula parva	Փոքր ճանճորս	-
90	A338	Lanius collurio	Ժուլան	-
91	A339	Lanius minor	Սևաճակատ շամփրուկ	-

92	A346	<i>Pyrrhocorax pyrrhocorax</i>	Կարմրակտուց ճայ	-
93	A379	<i>Emberiza hortulana</i>	Մյգու դրախտապան	-
94	A393	<i>Phalacrocorax pygmeus</i>	Փոքր ձկնկուլ	VU
95	A397	<i>Tadorna ferruginea</i>	Կարմիր բաղ	VU
96	A402	<i>Accipiter brevipes</i>	Եվրոպական ճնճղաճուռակ	VU
97	A403	<i>Buteo rufinus</i>	Տափաստանային ճուռակ	-
98	A404	<i>Aquila heliaca</i>	Գերեզմանաարծիվ	VU
99	A417	<i>Charadrius asiaticus</i>	Կասպիական քարադր	-
100	A418	<i>Hoplopterus spinosus</i>	Բոխկաթն կիվիվ	-
101	A420	<i>Pterocles orientalis</i>	Սևափոր դռլոն	VU
102	A429	<i>Dendrocopus syriacus</i>	Սիրիական փայտփոր	-
103	A442	<i>Ficedula semitorquata</i>	Կիսասպիտակավիզ ճանճոս	DD
104	A452	<i>Bucanetes githagineus</i>	Անապատային խածկտիկ	DD
105	A509	<i>Aquila nipalensis</i>	Տափաստանային արծիվ	VU
106	A511	<i>Falco cherrug</i>	Բալոբան	EN
107	A515	<i>Glareola nordmanni</i>	Տափաստանային ծիծառակտցար	VU
108	A516	<i>Charadrius lesshenaultii</i>	Հաստակտուց քարադր	EN
109	A533	<i>Oenanthe pleschanka</i>	Սևաթիկունք քարաթռչնակ	-
Կաթնասուններ				
hh	Կոդ	Տեսակ		ՀՀ Կարմիր գիրք
1	1302	<i>Rhinolophus mehelyi</i>	Մեհելիի պայտաքիթ	VU
2	1303	<i>Rhinolophus hipposideros</i>	Փոքր պայտաքիթ	-
3	1304	<i>Rhinolophus ferrumequinum</i>	Մեծ պայտաքիթ	-
4	1305	<i>Rhinolophus euryale</i>	Հարավային պայտաքիթ	NT
5	1306	<i>Rhinolophus blasii</i>	Բլազիուսի պայտաքիթ	EN
6	1307	<i>Myotis blythii</i>	Սրականջ գիշերաչղջիկ	-
7	1310	<i>Miniopterus schreibersii</i>	Սովորական երկարաթև	VU
8	1321	<i>Myotis emarginatus</i>	Եռագույն գիշերաչղջիկ	-
9	1323	<i>Myotis bechsteinii</i>	Բեխտեյնի գիշերաչղջիկ	VU
10	1352	<i>Canis lupus</i>	Գորշ գայլ	-
11	1354	<i>Ursus arctos</i>	Գորշ արջ	VU
12	1355	<i>Lutra lutra</i>	Ջրասամույր	EN
13	1361	<i>Lynx lynx</i>	Լուսան	-
14	1372	<i>Capra aegagrus</i>	Բեզոարյան այծ	VU
15	2023	<i>Panthera pardus</i>	Ընձառյուծ	CR
16	2635	<i>Vormela peregusna</i>	Խայտաքիս	VU

* Հայաստանից հայտնի է Վանաձորի և Մեղրիի մոտակայքերից, Ժամանակակից տվյալները բացակայում են: Կարիք կա հետագա հետազոտությունների տեսակի ներկա ապրելավայրերի հայտնաբերման և «Էմերալդ» ցանցի մեջ ընդգրկման համար:

Նշումներ

Նշումներ

**ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ «ԵՎՐՈՊԱՅԻ ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՄԻՋՎԱՅՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» (ԲԵՌՆ 1979 Թ.) ԿՈՆՎԵՆՅՈՒՄ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԷՄԵՐԱԼԳ ՑԱՆՑԸ»

Երևան – 2016

Ծրագրի ազգային տնօրեն
Գ. Ներսիսյան

Աշխատության խմբագիր
Ս. Բալոյան

Ծրագրի ազգային թիմի փորձագետներ
Գ. Ֆայվուշ
Ս. Առաքելյան
Կ. Աղաբաբյան
Ա. Ալեքսանյան
Ա. Ասլանյան
Ա. Ղազարյան
Ս. Հովհաննիսյան
Ս. Քալաշյան
Ս. Նահապետյան

Համակարգչային ձեռավորումը՝
Լորա ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ

Չափսը՝ 70X100, 1/16: Ծավալը՝ 9 տպ. մամուլ (որից՝ 1 մամուլ կավճապատ ներդիր):
Թուղթը և տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 100 օրինակ:

Տպագրվել է «Վան Արյան» հրատարակչատան տպարանում: